

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՆԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ ԵՎ ԴՐԱ  
ԴԵՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

(Զեկույց՝ Գերմանիայի Դաշնության Տիմնական օրենքի ընդունման 60-ամյակի  
առիթով, Երևան, 27 մայիսի 2009թ.)

**Գ. Նարոթյունյան** - ՆՏ ՍԴ նախագահ, պրոֆեսոր

Նոբելյանական խորհրդատուների հարգելի մասնակիցներ,  
Գերմանիայի Դաշնության հարգարժան փիլիսոփայական,  
Տիկնայք եւ պարոնայք.

Ցանկանում եմ Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանի  
անունից շնորհավորել բոլոր ներկաներին Գերմանիայի Դաշնության Տիմնական օրենքի  
ընդունման 60-ամյակի կապակցությամբ: 1949թ. մայիսի 23-ին Գերմանիայի Պառլամեն-  
տական խորհուրդը հաստատեց, որ մայիսի 8-ին Խորհրդի կողմից ընդունված Տիմ-  
նական օրենքը մայիսի 16-22-ը հավանության է արժանացել 2/3-ից ավելի Նոբելի  
ժողովրդական ներկայացուցչությունների կողմից: Այդ օրը կյանք մտալ առանձ-  
նահատուկ մի իրավական ակտ, որը բացառիկ դեր ու նշանակություն ունեցավ ոչ միայն  
գերմանական հասարակության վերածննդի ու զարգացման, այլև ողջ եվրոպական  
սահմանադրականության հետագա ձեւավորման գործում:

Գերմանիայի Դաշնության Տիմնական օրենքի մասին շատ է գրվել ու խոսվել: Այն  
արժեքավորվել է փարբեր փեսանկյուններից: Այսօրվա իմ համառոտ վերլուծությունն  
անդրադարձ է լինելու սահմանափակ թվով այնպիսի հիմնահարցերի, որոնք առավել  
քան հրապարակ են մեր օրերի համար եւ յուրաքանչյուր երկրի սահմանադրականության  
ձեւավորման անկյունաքարն են հանդիսանում:

Գերմանիայի Դաշնության Տիմնական օրենքն **առաջին հերթին աչքի է ընկնում  
կուռ արժեքանական հենքով ու սահմանադրաիրավական հարաբերությունների  
համակարգային կանոնակարգման ամբողջականությամբ:** Այն իր բնույթով ոչ թե,  
այսպես կոչված, «մոդելային» Սահմանադրություն է, ինչը բնորոշ է վերջին փաս-  
նամյակներում միջազգային սահմանադրական զարգացումներին եւ կառուցվում է սահ-  
մանադրական արժեքների ներմուծման ու փրանսպլանտացիայի վրա, այլ **պատմական  
զարգացումների փրամաքանական հանրագումար է, հասարակական համաձայ-  
նություն է ժամանակի քննությունը բռնած, ապրված, կենսագոյի իմաստավորված  
կանոն դարձած արժեքների շուրջ:**

Գերմանական արդի սահմանադրականությունը խարսխված է պետության եւ իրավունքի մասին գերմանական փեսափիլիսոփայական հարուստ ժառանգության վրա: Միաժամանակ, ունենալով նաեւ եվրոպական առաջավոր սահմանադրական մտքի ազդեցությունները, հեղինակները շրջանի գերմանական սահմանադրական զարգացումներին (հատկապես 1815թ. հունիսի 8-ի՝ Գերմանական միության ստեղծման մասին ակտի ստորագրումից հետո) բնորոշ են դառնում ազատական-ժողովրդավարական որակները, որոնք հիմք դրեցին սահմանադրականության հետագա զարգացումների համար<sup>1</sup>:

Իրավունքի փեսափիլիսոփայական ընկալման ու իրավագիտական մեկնաբանման կարեւոր փուլ է սկսվում ամբողջ Եվրոպայում դեռեւս XVII դարի կեսերից: Այդ ժամանակաշրջանի բնորոշ առանձնահատկություններից էր այն, որ ձեւավորվում էր բնական իրավունքի մասին առավել ամբողջական աշխարհայացք եւ մերժվում էր, այսպես կոչված, ավարաբիրական իրավաբանական աշխարհայացքը: Նոր հայացքների կրողների մեջ հատկապես առանձնացան Ն. Մաքիավելին (1469-1527), Ն. Նրոցիուսը (1583-1645), Բ. Սպինոզան (1632-1677), Թ. Նոբսը (1588-1679), Զ. Լոկը (1632-1704), Շ.- Լ. Մոնպեսքյոն (1689-1755), Ժ.-ժ. Ռուսոն (1712-1778), Թ. Ջեֆերսոնը (1743-1826), Թ. Փեյնը (1737-1809), Է. Կանտը (1724-1804), Գ. Նեգելը (1770-1831) եւ այլք: Նրանք, մասնավորապես, գրնում էին, որ բնական իրավունքը բխում է հենց մարդու էությունից, որը եւ նրան մղում է փոխադարձ առնչությունների: Բնական իրավունքի ճանաչումն **իրավագիտությանը գիտական բնույթ հաղորդեց**: Կամասահման իրավունքն ի վիճակի չգտնվեց հասնելու իր գիտական արմատներին<sup>2</sup>:

Տնտեսական հարաբերությունների զարգացումը, ազատ ու մրցակցային դաշտի ստեղծումը, մարդու իրավունքները՝ **որպես իշխանության սահմանափակման չափանիշ ընդունելը**, ինչպես նաեւ ազատական արժեքային համակարգի այլ փարրերի աստիճանաբար արմատավորումը եվրոպական արժեքային համակարգում վերջին ավելի քան 300 փարրիների ընթացքում բյուրեղացան սահմանադրական այնպիսի նորմերում ու սկզբունքներում, որոնք XX դարի երկրորդ կեսից արդեն ոչ թե լոկ կարգախոս են, այլ ապրող արժեքներ: Ինչպես իրավագիտորեն նշում է Յու. Ա. Տիխոմիրովը, XVII դարը բերեց բնական իրավունքի գաղափարները, XVIII դարն առաջ քաշեց ազատական պետության անհրաժեշտությունը՝ հանձին Ռուսոյի ժողովրդական ներկայացուցչության եւ

<sup>1</sup> Стів В.Г. Баев, Европейский конституционализм после Наполеона (на примере Германии) // Журнал Российского права, 2005, N7, с. 113-124.

<sup>2</sup> Άδϊ òέέ Άóáϊ Άá Άδϊ ι ó. Ἰ ἰ δαάá áϊ éϊ ú è ì èδà // Άί óϊ éϊ áεý ì èδϊ áϊ é ì δαáϊ áϊ é ì úñèè. Ò. III. Ἰ ., 1999, էջեր 21-26:

Մոնտեսքյոյի՝ իշխանությունների փարանջարման հայեցակարգերի, իսկ XIX դարի առաջին երրորդում Գերմանիայում ծնվեց իրավական պետության փեսությունը<sup>3</sup>:

Գերմանական սահմանադրականության հիմքը մարդու արժանապատվությունը, նրա իրավունքներն ու ազատություններն են, իրավունքի գերակայության երաշխավորումը եւ ազատական-իրավական հարաբերությունների հենքի վրա իրավական պետության կայացումը: Ազատական սահմանադրականության հիմնական հատկանիշը հենց այն է, որ անհատն իր իրավունքներով ու ազատություններով, իր բանական ինքնադրսեւորման նախադրյալներով դառնում է բոլոր սոցիալական ու քաղաքական երեւոյթների չափորոշիչը<sup>4</sup>:

Նաճախ գերմանական սահմանադրականությունը բնորոշվում է որպէս ռադիկալ ազատական<sup>5</sup>: Տիմնավորումն այն է, որ գերակայությունը փրվում է ոչ թե պետության դերին, այլ մարդու իրավունքներին ու ազատություններին: Սակայն սա խոր արժեհամակարգային կողմնորոշում է, որը դարձավ ոչ միայն արդի եվրոպական սահմանադրականության զարգացման առանցքը, այլեւ ողջ եվրոպական իրավունքի բնորոշ առանձնահատկությունը:

Այսուհանդերձ, Գերմանական սահմանադրականությունը հանդես չեկավ մեկուսի, այլ կարողացավ իր մեջ ներառել արեւմտյան իրավական մտքի առաջադեմ ողջ ընդհանրացումները՝ պահպանելով իր ինքնատիպությունը: Դա, առաջին հերթին, վերաբերում է սահմանադրական ելակերպային սկզբունքներին:

Եթե շարք երկրներում մարդու իրավունքներն ի սկզբանե սահմանադրական ամրագրման առարկա չդարձան, այլ կանոնակարգվեցին հետագա օրենքների (բիլերի) միջոցով, ապա Գերմանիայում գործ ունենք բոլորովին այլ որակի հետ՝ մարդու իրավունքներին նվիրվեց Տիմնական օրենքի առաջին իսկ բաժինը: Սա միայն խորհրդանշական ու կառուցվածքային հնարք չէ, այլ արժեհամակարգային լուրջ կողմնորոշում է:

Գերմանիայի Դաշնության Տիմնական օրենքի առաջին հոդվածի 1-ին կետն ամրագրում է, որ մարդու արժանապատվությունն անձեռնմխելի է: Դրա պաշտպանումը եւ հարգումն ամեն մի պետական իշխանության պարտականությունն է: Նույն հոդվածի 2-րդ կետով սահմանվում է, որ գերմանական ժողովուրդն ընդունում է մարդու **անձեռնմխելի** ու **անօտարելի** իրավունքները՝ որպէս ամեն մի մարդկային հանրության, խաղաղության եւ աշխարհում արդարության հիմք: 3-րդ կետն ամբողջականացնում է հայեցակարգային մտքեցումը՝ ամրագրելով, որ ներկայացվող հիմնական իրավունքները

<sup>3</sup> Тихомиров Ю.А. Теория компетенции. М., 2004, էջ 10:

<sup>4</sup> Мишел Розенфельд, Андраш Шайо, Распространение либерального конституционализма: изучение развития права на свободу слова в новых демократиях // Сравнительное конституционное обозрение. 2007, N1, с. 103.

<sup>5</sup> Տէւն Теория конституционализма и философия государства в ФРГ // Закон и право, N5, 2001, с. 41.

**պարտադիր են օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների համար՝ որպէս անմիջականորեն գործող իրավունք:**

**Իրավունքով իշխանության սահմանափակումն իրավական պետության հիմնական բնութագրիչն է:** Առաջին անգամ Գերմանիայի Նիմնական օրենքում ամրագրված այս հիմնարար սկզբունքը դարձավ եվրոպական սահմանադրականության անկյունաքարը: Սահմանադրությունը կարող է վերածվել գեղեցիկ բառերի ժողովածուի, եթե **սահմանադրական սկզբունք - իրավունք - իշխանություն** շղթայում չկա ներդաշնակ փոխալայնանավորվածություն ու փոխլրացում, որի շնորհիվ **իշխանության գործունեության էությունն է դառնում իրավունքի երաշխավորումը:** Վերջին հաշվով, սահմանադրությունները կյանքի են կոչվում երեք հիմնական առաքելություն իրականացնելու համար.

- երաշխավորելու մարդկանց իրավունքներն ու ազատությունները,
- սահման դնելու իշխանությանն ու այն իրականացնողների գործողություններին,
- սահմանելու պետական կարգի հիմունքներն ու կանոնակարգելու իշխանական գործառույթների իրականացումը:

Գերմանական սահմանադրականության ելակետը դարձան իրավափիլիսոփայական մտքի կողմից ընդհանրացված հետեւյալ անառարկելի ճշմարտությունները.

- մարդը, որպէս սոցիալական երեւոյթ, հասարակական հարաբերությունների մեջ է մտնում իր բնական ու անօտարելի իրավունքներով,
- պետությունը պարտավոր է մարդու իրավունքները ճանաչել որպէս բարձրագույն եւ անօտարելի արժեք, որպէս սահմանադրորեն ամրագրված անմիջական գործող իրավունք,
- ամեն մի օրենք բխում է այդ իրավունքներից, պաշտպանում է այդ իրավունքները, դրանք սահմանափակում է միայն ու միայն այն չափով, որչափով դա անհրաժեշտ է այլոց իրավունքների ճանաչման ու երաշխավորման, հասարակական ներդաշնակ համակեցության համար,
- մարդու բնական իրավունքներն են ընկած ժողովրդի եւ պետության կողմից իշխանության իրականացման հիմքում: Իրավունքով է իշխանությունը սահմանափակվում, եւ ոչ թե իշխանությամբ՝ իրավունքը<sup>6</sup>,
- մարդու սահմանադրական իրավունքների անմիջական գործողությունը երաշխավորվում է Սահմանադրությամբ, օրենքներով եւ իրավակիրառական պրակտիկայով:

<sup>6</sup> Ինչպէս նշում է ակադեմիկոս Վ. Ներսեսյանցը՝ «...օրենքը (այն, ինչը սահմանվում է որպէս պոզիտիվ իրավունք) կարող է թե՛ համապատասխանել եւ թե՛ հակասել իրավունքին...: Միայն որպէս իրավունքի արտահայտման ձեւ է օրենքը (պոզիտիվ իրավունքը) իրավական երեւոյթ: ... Ոչ թե իրավունքն է պաշտոնական-իշխանական համապարտադրականության հետեւանք, այլ հակառակը...» (Տե՛ս Ներսեսյանց Վ. Ս., Իրավունքի եւ պետության տեսություն, Երեւան, «Նաիրի», 2001, էջեր 41-43):

Տիմնական օրենքում այնքան որոշակի ու միանշանակ է շեշտադրումը հիմնական իրավունքներին (ինչպես նշվեց, եզակի սահմանադրություններից է, որ առաջին գլուխը ոչ թե նվիրված է սահմանադրական կարգի հիմունքներին, այլ մարդու իրավունքներին), որ որոշ սահմանադրագետներ Գերմանիայի Դաշնության հիմնական օրենքը դիտարկում են «էզոիզմն օրենսդրորեն ամրագրելու» տեսանկյունից<sup>7</sup>:

**Սահմանադրությունն ամրագրելով մարդու իրավունքների ճանաչման ու պաշտպանության նկատմամբ մեթոդաբանական որոշակի դիրքորոշում՝ կանխորոշում է օրենսդրորեն դրա նյութականացման բնույթը, ինստիտուցիոնալ ապահովումը եւ համակարգային երաշխավորումը:** Սահմանադրությունն ինքը չպետք է իրավունքի գերակայության սկզբունքի ամբողջական ու լիարժեք գործադրման արգելակ դառնա:

Գերմանական սահմանադրականության առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ իրավունքները դիտարկվում են դինամիկայի մեջ, դրանց զարգացման միտումների ու երաշխավորման պարասխանաբանության ամբողջականության մեջ: Այս տեսանկյունից ուշադրության է արժանի նաեւ իրավունքների չարաշահման սահմանադրական անդրադարձը, որ եզակի է եվրոպական սահմանադրական պրակտիկայում, սակայն կանխարգելիչ մեծ լիցք է պարունակում ու ուշադրության է արժանի: Խոսքը վերաբերում է Տիմնական օրենքի 18 հոդվածին, որը սահմանում է, որ «Յուրաքանչյուրը, ով կօգտագործի կարծիքի արտահայտման ազատությունը, մասնավորապես՝ մամուլի ազատությունը (հոդվ. 5, մաս 1)<sup>8</sup>, դասավանդման ազատությունը (հոդվ. 5, մաս 3), ժողովների ազատությունը (հոդվ. 8), միավորման ազատությունը (հոդվ. 9), նամակագրության, փոստային, հեռահաղորդակցության ու հեռախոսային կապի գաղտնիությունը (հոդվ. 10), սեփականության իրավունքը (հոդվ. 14) կամ ապաստանի իրավունքը (հոդվ. 16.ա) պայքարելու համար ազատ ժողովրդավարական կարգերի հիմքերի դեմ, կորցնում է այդ հիմնական իրավունքները: Իրավունքների կորուստը եւ դրա սահմանները սահմանվում են դաշնային սահմանադրական դատարանի որոշմամբ:

Նման մոտեցումը որքան էլ պայմանավորված լիներ պարմական դասերով ու հանրային կյանքի փորձություններով, այսուամենայնիվ, ահագանգ էր այն մասին, որ հասարակական հարաբերություններում նույնպես չափը եւ ներդաշնակությունը փոխպայմանավորված երեւոյթներ են, եւ դրանց շնորհիվ է հնարավոր կանխել բացասական սոցիալական էներգիայի կուտակումները, դրա կրիտիկական զանգվածի ձեւավորումն ու սոցիալական աղետները:

<sup>7</sup>Теория конституционализма и философия государства в ФРГ // Закон и право, N5, 2001, с. 42.

<sup>8</sup> Նկատի պետք է ունենալ, որ ամերիկյան սահմանադրականությունն այս հարցում առավել լիբերալ մոտեցում է որդեգրել: Մասնավորապես, ԱՄՆ Սահմանադրության առաջին փոփոխության մեջ ամրագրվեց, որ Կոնգրեսը չպետք է խոսքի կամ մամուլի ազատությունը սահմանափակող օրենքներ ընդունի:

Գերմանիայում առաջին անգամ սահմանադրորեն ամրագրվեցին նաեւ հիմնական իրավունքների սահմանափակման սահմանադրական սկզբունքները (հոդվ. 19): Այս մոտեցումը հետագայում դարձավ ելակետ իրավունքների սահմանափակման ամբողջական տեսության եւ, այսպես կոչված, երեք ոսկե կանոնների սահմանման համար: Դրանք էին՝ իրավունքների սահմանափակումը միայն օրենքով, համաչափ սահմանափակումը, արգելափակման բացառումը կամ այնպիսի սահմանափակումը, որը չի աղավաղում իրավունքի էությունը:

Մարդու իրավունքները ելակետային նշանակություն ունեցան նաեւ Գերմանիայի Դաշնության սահմանադրական դատարանի համար: Վերջինիս իրավական դիրքորոշումների առանցքն է կազմում այն հիմնարար սկզբունքը, որ բոլոր իրավական նորմերը պետք է հիմքում ունենան ու բխեն իրավունքի գերակայության սկզբունքից: Տիմնական օրենքը պարտադրում է յուրաքանչյուր պետական ինստիտուտի հարգել ու պաշտպանել մարդու արժանապատվությունը, ճանաչել նրա իրավունքները որպես բարձրագույն ու անօտարելի արժեք, որպես իշխանության սահման, որպես անմիջականորեն գործող իրավունք: Այս վերջին հանգամանքը նույնպես բացառիկ կարեւորություն ունի մեր ժամանակների համար եւ, ցավոք, անհրաժեշտ խորությամբ արժեվորված ու ընկալված չէ վերափոխվող իրավական համակարգերում:

**Առանց վարանելու կարող ենք ընդհանրացնել, որ XIX դարի առաջին երրորդում Գերմանիայում ծնվեց ու հետագայում՝ 1949թ. Տիմնական օրենքում սահմանադրորեն ամրագրվեց իրավական պետության ամբողջական, գիտականորեն հիմնավորված ու կյանքի քննությունը բռնած տեսություն, որը քաղաքակրթությունների զարգացման ներկա հոլովությունում սոցիալական առաջադիմության այլընտրանք չունեցող մայրուղին է դարձել:**

**Քաղաքացիական հասարակությանը բնորոշ արժեքները, իրավական, ժողովրդավարական պետության որակները ձեւավորվեցին դարերի ընթացքում, սակայն դարձան հասարակական կյանքի համակարգային կարգավորիչներ հատկապես նախորդ հազարամյակի վերջին մի քանի տասնամյակներում:** Փաստորեն, 1950-ականներից սկսած ժողովրդավարական ընդհանուր արժեքներն ու իրավական պետության սկզբունքներն իրենց առավել համակարգված ու կոնկրետ արտահայտությունը գրան եվրոպական երկրների սահմանադրական լուծումներում՝ տվյալ համակարգին բնորոշ բազմաթիվ առանձնահատկություններ հաշվի առնելով: Եվ, ինչպես նշում է պրոֆեսոր Դ. Նովարդը, սահմանադրականությունը, ժողովրդավարությունը եւ օրենքի

իշխանությունն Արեւմտյան Եվրոպայում այսպես թե այնպես փիրապետող դարձան Երկրորդ աշխարհամարտից հետո<sup>9</sup>:

Ընդհանրացնելով՝ կարող ենք ասել, որ թեև արդի եվրոպական սահմանադրական մշակույթի հենքն են կազմում հունա-հռոմեական, անգլիական, գերմանական, ֆրանսիական եւ եվրոպական մի շարք այլ երկրների հարուստ իրավական մշակույթը, 1791 թ.՝ Լեհաստանի ու Ֆրանսիայի, 1814 թ.՝ Նորվեգիայի, 1831 թ.՝ Բելգիայի, 1866 թ.՝ Շվեդիայի, 1868 թ.՝ Լյուքսեմբուրգի, 1874 թ.՝ Շվեյցարիայի, 1901 թ.՝ Ավստրալիայի ու հետագայում այլ երկրների սահմանադրությունների ընդունումը, որոնց զգալի մասը մինչ օրս գործում է եւ ձեւավորել է կայուն սահմանադրական ավանդույթներ, այսուհանդերձ, XX դարի ընթացքում երկու աշխարհամարտեր տեսած, դրանցից որոշակի դասեր քաղած եւ ժողովրդավարությունն ու իրավունքի գերակայությունն անկյունաքարային արժեք դարձրած Եվրոպայի համար՝ որպես համընդհանուր սկզբունք, **սահմանադրական մշակույթի գլխավոր կարգախոսը դարձավ այն, որ օրենքը եւ պետությունը պետք է լինեն իրավական, երաշխավորեն հավասարությունը, ազատությունը եւ արդարությունը, որոնց արժեհամակարգային հիմքը մարդու արժանապատվության, նրա անօտարելի իրավունքների գերակայությունն է**<sup>10</sup>: Ընդ որում, իրավական համակարգն ամբողջական ու կենսունակ է, երբ այդ արժեքները դառնում են սահմանադրական արժեքներ, ստանում են ճանաչման ու պաշտպանության սահմանադրական երաշխիքներ: Իսկ այս հարցում անուրանալի է Գերմանիայի Դաշնության Նիմնական օրենքի դերը:

Մի կարեւոր հանգամանք էս: Նայքնի է, որ 17-18-րդ դարերի տեսաբաններից Ջոն Լոկի, Մոնպեսթրյոյի, Ժան-ժակ Ռուսոյի, հետագայում նաեւ՝ Կանտի եւ այլոց մոտ ոչ միայն իրավունքի գերակայության, բնական իրավունքի սուբստանցի ըմբռնումն ստացավ նոր որակ՝ պահպանելով այն կարմիր թելը, որ **օրենքն իրավունքի մարմնացումը պետք է լինի**, այլեւ առավել հստակ զարդարող իշխանությունների փարանջապարման գաղափարը:

Ներագայում ամերիկյան սահմանադրական միտքը նոր որակ հաղորդեց իշխանությունների փարանջապարման տեսության գործնական կիրառմանը: Ամերիկյան սահմանադրականության առանցքը դարձան զսպումների ու հակակշիռների գործունե համակարգի մշակումը եւ սահմանադրորեն իշխանությունների փարանջապարմանը դիմամիկ հավասարակշռություն հաղորդելը: Այս հարուստ ժառանգությունը հաշվի առնելով՝ ժամանակակից սահմանադրական իրավունքի շարք տեսաբանների (մասնավոր-

<sup>9</sup> Ховард Д. Конституционализм и развивающаяся демократия // Конституционное правосудие, 2004, N 3, էջ 20:

<sup>10</sup> Այդ մասին տե՛ս Политико-правовые ценности: история и современность /Под. ред. В.С. Нерсесянца. М., 2000, էջեր 5-29:

րապես, գերմանացի պետականագետ Կ. Նեսսեի) կողմից իշխանությունների փարան-  
ջարման սկզբունքի հիմնական բնորոշիչները համարվում են մարդկանց համարեղ  
գործունեության կարգավորումը և կարգապահությունը, իշխանության առանձին ճյու-  
ղերի գործառնական լիազորությունների հստակեցումը, դրանց իրավագործության  
որոշումը և սահմանափակումը, ընդհանուր աշխարհային կարգավորումը, պետական  
մարմինների իրավասությունների հավասարակշռումը և, արդյունքում՝ սահմանափակ  
պետական իշխանության միասնականությունը<sup>11</sup>: Բանը նրանում է, որ ազգային  
իրավական հարաբերությունների պայմաններում չի բացարձակեցվում իշխանությու-  
նների փարանջարման պարագան: Տվյալ սկզբունքը ենթադրում է նաև գործառնական  
հստակեցված ու անկախաբար իրականացվող իրավասություններով օժտված միաս-  
նական իշխանության փոքր թվերի փոխգործակցություն ու հավասարակշռվա-  
ծություն: Այդ առումով միջազգային պրակտիկայում փորձ է արվում սահմանադրորեն  
սահմանել իշխանության սահմանափակումները, սրբազան իշխանությունների փոխկապ-  
վածության, գործողությունների «պարտադրված» համաձայնեցման համակարգ (խորհր-  
դարանի կողմից կառավարության ծրագրի հաստատում, Նախագահի արգելանքի (վե-  
տոյի) իրավունքը, խորհրդարանի կողմից Նախագահի արգելանքի հաղթահարման  
իրավունքը, խորհրդարանն արձակելու Նախագահի իրավունքը, կառավարությանն  
անվստահություն հայտնելու խորհրդարանի իրավունքը և այլն): Իր հերթին, իշխա-  
նության հավասարակշռվածության պահպանման կարեւորագույն պայման է սահմա-  
նադրական ընդդատության եղանակով պետական իշխանությունների սահմանադ-  
րական լիազորությունների հաշվեկշռի խախտման բացահայտման, գնահատման ու  
վերականգնման գործուն համակարգի առկայությունը: Իսկ դա հնարավոր է միայն այն  
դեպքում, երբ երեք իշխանություններից յուրաքանչյուրը պետք է առնվազն ունենա  
այնքան լիազորություններ, որ ապահովի նրա էության դրսևորումը:

Ուստի հաջորդ էական հանգամանքը, որի վրա կցանկանայի ձեր ուշադրությունը  
հրավիրել, այն է, որ Գերմանիայի Դաշնության Նիմնական օրենքն առաջին առավել  
ամբողջական սահմանադրական ակտն էր, որը բովանդակեց գործուն համակարգ՝  
Սահմանադրության գերակայությունը երաշխավորելու և խախտված սահմանադրա-  
կան հավասարակշռությունը բացահայտելու, գնահատելու և վերականգնելու համար<sup>12</sup>:  
Թերեւս մեկից ավելի առանձին զեկույցներ կարելի էր նվիրել Գերմանիայի Դաշնու-  
թյունում սահմանադրական արդարադատության համակարգային առանձնահատկու-

<sup>11</sup> Ст'ю Хессе К. Основы конституционного права ФРГ. М., 1981, էջ 237:

<sup>12</sup> Գերմանիայի սահմանադրական դատարան 1951թ. մուտքագրվել է 481 դիմում, 1955-ին այն կազմել է 594, 1960-ին՝ 1382, 1970-ին՝ 1677, 1980-ին՝ 3107, 1990-ին՝ 3400, 2000-ին՝ 4831, 2005-ին՝ 5105 դի-  
մում:



թյուններին՝ բացահայտելու համար այդ համակարգի էրալոնային դերն ու նշանակությունը սահմանադրական վերահսկողության միջազգային զարգացումների ներկա հանգրվանում: Այսուհանդերձ, ցանկանում ենք առանձնացնել մեկ հիմնահարց, որը, մեր կարծիքով, բացառիկ կարևոր է ու մեզանում չընկալված:

Գերմանիայի Դաշնության Տիմնական օրենքի 93 հոդվածի 1-ին կետի ձևակերպումն իր խորությամբ եւ հիմնահարցի ընդգրկուն լուծմամբ անգերազանցելի է առայսօր: Այն սահմանում է, որ «Դաշնային սահմանադրական դատարանը որոշում է ընդունում սույն Տիմնական օրենքի մեկնաբանման վերաբերյալ՝ Դաշնային որեւէ գերագույն մարմնի կամ սույն Տիմնական օրենքով կամ Դաշնային որեւէ գերագույն մարմնի կանոնակարգով սեփական իրավունքներով օժտված այլ մարմինների իրավունքների եւ պարտականությունների շուրջ ծագած վեճերի առնչությամբ»:

Տիմնական օրենքի նույն 93 հոդվածի 2-4-րդ կետերը ներառեցին բոլոր այլ փիլի սահմանադրական վեճերը, որոնց արդարադատական լուծումը երկրի դինամիկ ու կայուն զարգացման կարևորագույն գրավականն է: Դա վերաբերում է հատկապես դաշնային կառուցվածք ունեցող երկրում շահերի ներդաշնակմանն ու կայունության երաշխավորմանը:

Առաջին անգամ սահմանադրորեն ամրագրվեց եւ փաստամյակների ընթացքում ժամանակի քննությունը բռնեց այն կարևոր սկզբունքը, որ պետության ներսում պետականության հիմնախնդիրներին առնչվող ցանկացած քաղաքական վեճ իր արդարադատական լուծումը պետք է սրանա: Ոչ թե իրավական վեճերը պետք է լուծվեն քաղաքական հարթությունում, այլ քաղաքական վեճերը՝ իրավական հարթությունում: Սա իրավական պետության էական հատկանիշներից է, Սահմանադրության գերակայության ապահովման հիմնական նախադրյալներից մեկը: Այն դարձավ գերմանական սահմանադրականության մեկ այլ կարևոր ներդրումը եվրոպական սահմանադրական զարգացումների գործում:

Գերմանական սահմանադրականության էական առանձնահատկություններից է եւ այն, որ Սահմանադրության գերակայության երաշխավորումը համակարգային ամբողջականության առումով դասական օրինակ հանդիսացավ մյուս երկրների համար: Գործնականում արմատավորվեց այն ոսկե կանոնը, որ սահմանադրական բոլոր ինստիտուտները, այդ թվում՝ յուրաքանչյուր ոք, դարձան սահմանադրական դատարանի դիմող լիարժեք սուբյեկտ, իսկ սահմանադրական բոլոր ինստիտուտների իրավական ակտերը դարձան սահմանադրական վերահսկողության օբյեկտ: Դրանով հնարավոր դարձավ լուծել եռամիասնական խնդիր՝ ապահովել իրավական ակտերի սահմանադրականությունը, պաշտպանել մարդու սահմանադրական իրավունքները՝ որպես անմիջականորեն գործող իրավունք, լուծել սահմանադրական լիազորությունների վերաբերյալ

իշխանության մարմինների միջև առաջացած վեճերը: Այս բոլորը միասին Սահմանադրության գերակայության երաշխավորման էությունն ու բովանդակությունն են կազմում: Առանց չափազանցելու կարելի է արձանագրել, որ այս ոլորտում այն, ինչի հասան Գերմանիայում 1949թ. Նիմնական օրենքի ընդունմամբ ու հետագա փոփոխություններով, մասնավորապես՝ 1969թ. իրականացված, համակարգային առումով անգերազանցելի է ու օրինակելի իրավական պետության կայացման ուղի ընտրած յուրաքանչյուր երկրի համար: Գերմանիայի Դաշնության սահմանադրական լուծումները հիմնավորապես ապացուցեցին, որ անհրաժեշտ են ներսահմանադրական կայունության այնպիսի նախադրյալներ, որոնք կապահովեն մարդու իրավունքների սահմանադրական երաշխիքների ու իշխանությունների լիազորությունների սահմանադրական հաշվեկշռի խախտումների բացահայտման, գնահատման եւ վերականգնման իրավական կուռ համակարգի գործունակությունը, սահմանադրական կարգը կօժտեն առավել կենսունակ «**իմունային համակարգով**»՝ մարդու իրավունքների մեջ առանձնահատուկ կարեւորություն փալով նրա սահմանադրական արդարադատության իրավունքին:

Ամփոփելով, ցանկանում եմ ընդգծել, որ սահմանադրական նման լուծումների արդյունքում **ներկայիս գերմանական հասարակությունն առանձնանում է սահմանադրականացման անհամեմատ բարձր մակարդակով: Սահմանադրական արժեքները խոր են արմատավորված հանրային կյանքում, Նիմնական օրենքը ոչ միայն դարձել է ապրող իրողություն, այլեւ ժողովրդին համախմբող արժեքանական մեծ ուժ է: Դա ուսանելի օրինակ է հապկապես հասարակական վերափոխում ապրող երկրների ու ժողովուրդների համար:**

Կրկին անգամ շնորհավորում եմ մեզ բոլորիս համաշխարհային սահմանադրականության մեջ մեծ ներդրում ունեցող Նիմնական օրենքի 60-ամյակի առիթով եւ մաղթում գերմանացի բարեկամ ժողովրդին հետագա բարգավաճում: